«Արցախ ՀԷԿ» Բաց Բաժնետիրական Ընկերության
Վերստուգող հանձնաժողովի եզրակացություն

Ներկայացվում է «Արցախ ՀԷԿ» Բաց Բաժնետիրական Ընկերության Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին

«Արցախ ՀԷԿ» Բաց Բաժնետիրական Ընկերության 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեփակված տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք վերստուգման ենք ենթարկել «Արցախ ՀԷԿ» Բաց Բաժնետիրական Ընկերության ներկայացված ֆինանսական հաշվետվությունները,որոնք ներառում են 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշիռը, ֆինանսական արդյունքների ,սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ ծանոթագրություններ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Համաձայն ՀՀ Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների Ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշգրիտ ներկայացման համար պատասխանատու է ընկերոըթյան ղեկավարությանը:Այդ պատասխանատվությունը ենթադրում է սխալների կամ խարդախությունների արդյունքում առաջացող էական թերություններից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար համապատասխան ներքին վերահսկողության համակարգի մշակում ,ներդրում և կիրառում:

Վերստուգող հանձնաժողովի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված վերստուգման արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Վերստուգման աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում ,որոնք թույլ են տալիս ձեռք բերել վերստուգման ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ:

Եզրակացություն

Մեր կարծիքով , ֆինանսական հաշվետվությոընները , բոլոր էական առումներով , ճշմարիտ են ներկայացնում «Արցախ ՀԷԿ» Բաց Բաժնետիրական Ընկերության ֆինանսական վիճակը, ինչպես նաև նրա գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերն 2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտական տարվա համար:

«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ
Վերստուգող հանձնաժողովի նախագահ Արթուր Պետրոսյան

15.04.2011թ.